



## ԱՏԵՓԱՆ ՍԱԼԽԱՍՅԱՆՑԻ ՆԱՍԱԿԸ ՎԱՅՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԿՈՒՆՈՒՄ

Ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցի արխիվը, որ պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, դժբախտաբար շատ աղքատիկ է: Անհայտ են նրա ստացած նամակները, քիչ են պահպանվել պաշտոնակիցներին իր հղածները: Ստորև հրապարակվող նամակը միակն է իր ֆոնդում (թիվ 17, էջ 1-3) և արժարժում է Սեբեոս Եպիսկոպոսի Պատմությանն առնչվող հարցեր: Նամակի վերին լուսանցքում գրված և ջնջված է՝

«30 28 նոյեմբեր

12 10 դեկտեմբեր»:

Ուրեմն՝ նամակի գրության հավանական ժամանակը 1898 թ. տարեվերջն է: Հասցեատերը՝ Վահրամ Եպիսկոպոս Մանկունին (1846-1920), ժամանակին աշխատակցել է «Արարատ» ամսագրին, եղել է Գեորգ Դ Կաթողիկոսի կենսագիրը: Հետմահու՝ 1933 թ., Փարիզում լույս է տեսել նրա «Գեորգ Դ և իր ժամանակը» աշխատությունը:

Հ. Կ. ԳՅԱՄՉՅԱՆ

1898 Թիֆլիս

## ԳԵՐԱՊԱՏԻԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

Մ. Խորենացու պատմության վաերականությունն հաստատող մի աշխատությանը՝ զբաղումս լինելով՝ կարիք ունիմ մի դրական տեղեկության, որ ամենից անելի յայտնի կլինի Ձեր Սրբազնության. ուստի համարձակում եմ այս նամակովս դիմել Ձեզ և խնդրել, որ բարեհաճիք հաղորդել ինձ այդ տեղեկությունը:

«Արարատ» ամսագրի Ա. տարում (1868) տպագրում է մի ընդարձակ յօդում ճանաչ ստորագրության, որ կրում է վերնագիր. «Անընդհատ շարունակություն» Առաքելական յաջորդության Ուղղափառ Ս. Եկեղեցու Հայաստանայց: Թողումսի հեղինակը (երես 41) յայտնում է, որ օգուտ է քաղել երեք մագաղաթայ թերթերից, գրում Հայոց ՉՀԹ (779) թուականին, որ ըստ երևոյթին կտրումս և գողցումս են եղել Ս. Էջմիածնի մատենադարանի մի ձեռագրից<sup>1</sup>: Նոյն երեսում ծանօթության մէջ յայտնում է հետևեալը.

<sup>1</sup> Խոսքը «Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացի» մատենագրական ուսումնասիրության մասին է, որ լույս է տեսել Թիֆլիսում 1899-ին:

<sup>2</sup> Սեբեոսի Պատմության չորրորդ հրատարակության առաջաբանում Ստ. Մալխասյանցը գրել է. «Այս թերթերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմեցինք Կ. Պոլիս, Մանկունի Եպիսկոպոսին, որի պատասխանից երևաց, որ Միհրդատյանցը խոստովանել է, թե այդ թերթերը կտրված են եղել Էջմիածնի մատենադարանի մի ձեռագրից, և այդ թերթերը պահվում էին վեհաբանի Ծաղկյա այվան կոչված դահլիճում: Ուրիշ կողմից լսեցինք, որ Խրիմյան Հայրիկը այդ թերթերն ուղարկել է մատենադարան» («Սեբեոսի Եպիսկոպոսի Պատմություն», չորրորդ տպագրություն, Բաղդատությանը ձեռագրաց, հանդերձ առաջաբանի եւ ծանօթությանը ի ձեռն Ստ. Մալխասեանց, Եր., 1939, էջ ԽԳ): Հավանաբար վերջին տեղեկությունը հեղինակն ստացել է Գ. Տեր-Մկրտչյանից՝ ի պատասխան իր նամակի: Այս, ինչպեսև Մանկունու նամակները, հայտնաբերված չեն:

«Վերջին անգամ ի Պօլիս գտնուած ժամանակնիս, որ պէտք էր գայիմք ի Ս. Էջմիածին, Վեհ[ախառ] Կաթողիկոսը վերոյիշեալ երեք թերթերը, հետը զիրք մ'ալ... ձեռք բերաւ պ. Թ. Միհրդատեանցէն Ս. Էջմիածնայ մատենադարանին մէջ պահելու համար»:

Ապա, եր[ես] 102-105, հեղինակը մէջ է բերում այդ «խիստ մաշուած հին մա-  
զաղաթեայ երեք թերթերուն պարունակութեամբ օրինակը»:

Որովհետև այս թերթերի մէջ բերուած է և մի հատուած Ստեփանոս Տարա-  
նացու ժամանակագրական գրութեան<sup>3</sup>, իսկ այս Ստ. Տարոնացու գոյութիւն ունե-  
նալը մի կարևոր ապացոյց է իմ վերոյիշեալ աշխատութեան միս ապացոյցների  
շարքում՝ ուստի ցանկալի էր դրական տեղեկութիւն ունենալ այդ թերթերի վիճա-  
կի մասին: Ձեր Սրբազնութիւնը, որ անբաժան գործակից էիք երջանկայիշատակ  
Գեորգ Կաթողիկոսին<sup>4</sup> և իմ անտոհանալի հօր և բարերարի, չէ՞ք կարող ասել, թէ  
յիրաւի՞ Վեհ. Կաթողիկոսը այդ թերթերը բերեց Ս. Էջմիածին, ո՞ր դրուեցին  
դրանք կամ ի՞նչ եղան, նոյնպէս և՛ թէ ո՞վ է «Անընդմէջ շարունակութիւն Առաքե-  
լական յաջորդութեան» հեղինակը, որ օգտուել է այդ թերթերից: Ինձ այնպէս է  
թուում, թէ Ձեր Սրբազնութիւնը լինի:

Այս օրերս նոյն հարցով դիմեցի և Էջմիածին, իմ ճեմարանական ընկեր Գա-  
լուստ Տէր-Մկրտչեանին<sup>5</sup>, խնդրելով տեղեկութիւն թէ ներկայումս կա՞ն արդեօք  
այդ թերթերը մատենադարանում թէ ոչ: Պատասխան դեռ չեմ ստացել: Լիաշոյս  
եմ սակայն, որ Ձեր Սրբազնութեան և Գալուստի տալիք տեղեկութիւնները լի-  
վին կբացատրեն այս երեք կարևոր թերթերի վիճակը:

Կանխաւ շնորհակալութիւն յայտնելով Ձեր կրեւիք ներդրութեան համար՝ ակ-  
նածոյթեամբ համբոյր եմ մատուցանում Ձեր Աջին և խորին յարգանքով մնում եմ  
Ձեր Սրբազնութեան խոնարհ որդի

Ստ. ՄԱԼԽԱՍԵԱՆԻԾ

<sup>3</sup> Բանասերները (Ստ. Մալխասյանց, Հր. Աճառյան, Գ. Ջարբեհանայան, Ն. Բյուզան-  
դացի, Ա. Տեր-Միքելյան և ուրիշներ) այս Ստեփանոսին տարբերել են Ասողիկից: «Ստե-  
փանոս Տարոնեցին, դա 11-րդ դարի պատմագիր Ասողիկը չէ,- գրել է Մ. Աբեղյանը,- այլ  
մի հին հեղինակ» (Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Եր., 1968, էջ 430: Հմմտ. Հր. Աճառյան, Հա-  
յոց անձնանունների բառարան, հտ. Դ, Եր., 1948, էջ 602): Այս տեսակետը մերժել է Գ. Աբ-  
գարյանը, սակայն նրա առարկությունները սպառիչ համոզչություն չունեն: Օճշտելով, որ  
հայ մատենագրությանը հայտնի չէ Մեսրոպ Մաշտոցին ժամանակակից Ստեփանոս Տա-  
րոնեցի, նա հիշեցնում է, թե նույն բանը կա նաև «Յայնմատրքում», մինչդեռ «գիտենք, որ  
Ասողիկը 10-դ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացու մականունն է» (Գ. Աբգարյան,  
«Սերեոսի պատմությունը» և Անանուհի առեղծվածը, Եր., 1965, էջ 54-55): Ահա և մյուս  
փաստարկը. «Ստեփանոս Իոշքայի բառարանում Ստեփանոս Տարոնացի անունով  
պատմիչ չկա»: Տողատակի ծանոթագրության մէջ նա ասում է. «Այստեղ կա Ստոփանոս  
(ոչ Տարոնացի) անունով մի պատմիչ, որի ինքնությունը և ժամանակը հայտնի չէ» (նույն  
տեղը, էջ 55): Դժվար չէ նկատել, որ, այնուամենայնիվ, հարցն առկախ է թողնված:

Սերեոսի Պատմության քննական հրատարակության մէջ, չնայած իր այս առարկու-  
թյուններին, Գ. Աբգարյանը պահել է երրորդ գլխի վերնագիրն այնպէս, ինչպէս ունեն նա-  
խորդ, այդ թվում՝ Ստ. Մալխասյանցի հրատարակությունները. «Գլուխ Գ. Արդ՝ թէ պիտոյ է  
քեզ, ո՞վ ընթերցատէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյն եւ Ստե-  
փանոսի Տարանացոյն, հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հարեւ, ճանա-  
չեալ» («Պատմութիւն Սերեոսի», Աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 55,  
հմմտ. էջ 208, ծանոթ. 71):

<sup>4</sup> Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճյան (1866-1882) - Ամենայն Հայոց Կա-  
թողիկոս: Գեորգյան ճեմարանի հիմնադիրը: «Անտոհանալի հայր և բարերար» ասելով  
Ստ. Մալխասյանը նկատի ունի իր ճեմարանական կրթությունը:

<sup>5</sup> Գ. Տեր-Մկրտչյան (Միքաբան, 1860-1918): Ականավոր բանասեր, Ստ. Մալխասյան-  
ցի հայրենակից-ուսումնակիցը: Նրանք Գեորգյան ճեմարանի առաջին շրջանավարտնե-  
րից էին:

**Յ. Գ.** Խնդրում եմ Ձեր նամակի մէջ՝ որին սպասում եմ անհամբեր, մանրամասն հասցէն, որպէսզի աշխատութեանս մի օրինակ անկորուստ Ձեր ձեռքը կարողանամ հասցնել:

**Ր. Կ. ԳՅՄԺՅԱՆ** - *Письмо Степана Малхасянца епископу Ваграму Манкуни.* - В данной публикации приводится единственное сохранившееся в музее литературы и искусства им. Е. Чаренца письмо Ст. Малхасянца, адресованное епископу В. Манкуни (1846-1920). В письме затрагиваются вопросы, касающиеся Истории Епископа Себеоса.